ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Փգիշտիի 1

№ 1197-Ա «01» ապրիլի 2025 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-Ի Հ.4443-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հիմք ընդունելով հ.ՎԴ/5395/05/23 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 09.10.2023թ. վճիռը, հաշվի առնելով քաղաքացի Ալմաստ Լևոնյանի 19.02.2025թ. հ.Դ-18720-25 դիմումը.

1. Երևանի քաղաքապետի 2010 թվականի սեպտեմբերի 27-ի «Երևանի Քրիստափորի փողոցի 3-րդ նրբանցքի հ.8 բնակելի տան և հողամասի նկատմամբ Ալմաստ Անուշավանի Լևոնյանի իրավունքները վերականգնելու, 64.57քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» հ.4443-Ա որոշման 3-րդ կետում «քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին» բառերը փոխարինել «աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետին» բառերով:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

3. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին, կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ